ԼԻԼԻԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բակալավրականի 2-րդ կուրսի երաժշտագիտական բաժնի ուսանող
E-mail: minasyanlilia92@gmail.com

Ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մ. Ա. Տիգրանյան

*ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ (1927-2010). ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

«Լավ կեցեք և հայ մնացեք:
Մենք բոլորս կրողներն ենք հազարամյակներու մշակույթի մը և պարտավոր ենք հանուն մարդկության մշակույթի բազմերանգության սիրով տանել այդ քաղցր բեռը»:

Ներածություն

Խորհրդահայ երաժշտագիտության և ֆոլկլորագիտության զարգացման գործընթացում իր անուրանալի դերն է ունեցել երաժշտագետ, ֆոլկլորագետ, բանահավաք, վաստակաշատ մանկավարժ, արվեստագիտության թեկնածու (1969 թ.) Մանուկ Մանուկյանը, ում երկարամյա գիտական գործունեությունն առ այսօր մնացել է ստվերում: Ներկա աշխատանքը, ինչպես և մեր հետագա ուսումնասիրությունները, միտված են լրացնելու այդ բացը՝ արժանի գնահատական տալով հայ ժողովրդական երաժշտության իսկական նվիրյալի գործունեությանը: Ցավոք, Մ. Մանուկյանի անձնական արխիվը չի պահպանվել և կենսագրական նվազագույն տվյալներ ու որոշ տեղեկություններ մենք քաղել ենք հատուկենտ հրապարակված հոդվածներից (1. էջ 438): Երաժշտագետի գիտական գործունեությանը ծանոթանալու համար անհրաժեշտ էր կազմել նրա հրապարակած ուսումնասիրությունների ցանկը և այդ գործում օգտակար եղավ «Հայ մոնոդիկ երաժշտության մատենագիտություն»-ը (4. էջ 330), որը մեր պահանջները բավարարեց մասամբ, քանի որ մինչև 1990 թ-ի մատենագիտությունն էր, իսկ Մ. Մանուկյանի վերջին քսան տարվա (1990-2010 թթ.) հրապարակումների ցանկը մենք ինքներս լրացրեցինք:

Մ.Մանուկյանի կյանքն ու ստեղծագործական ուղին ուսումնասիրելու համար մեզ համար խիստ արժեքավոր եղան ազգականների՝ Արշալույս Պարոնյանի (զարմուհի), Զարուհի Մանուկյանի (դուստր), Նիկողոս Հաջյանի (աներոջդի), Մ.Մանուկյանի լավ բարեկամ՝ կոմպոզիտոր Սիմոն Հովհաննիսյանի դուստր՝ Գայանե Հովհաննիսյանի, ինչպես նաև Մ. Մանուկյանին ճանաչող գործընկերների՝ երաժշտագետներ Ալինա Փահլևանյանի, Գոհար Մելիքսեթյանի, Ծովինար Մովսիսյանի, Գոհար Շագոյանի, Աննա Շամախյանի, կոմպոզիտորներ Երվանդ Երկանյանի, Արզաս Ոսկանյանի հուշերը, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում:

Ստեղծագործական նկարագիր

Մ. Մանուկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները բավականին մեծ են: Երաժշտագետի մենագրություններն ու գիտական հոդվածները նվիրված են հայ ազգային երաժշտության խնդիրներին: Առանձնահատուկ նվիրումով Մ.Մանուկյանն ուսումնասիրել է հայ երաժշտական աշուղական երգարվեստը: Նրա գրչին են պատկանում «Հայկական Սովետական Հանրագիտարան»-ի հայ աշուղներին նվիրված մի շարք հոդվածներ: Իր բազմամյա գործունեության ընթացքում ուսումնասիրել և լուսաբանել է Սայաթ-Նովայի (5.), Շերամի (6.), Շահենի (7. էջ 420), Շիրինի (8. էջ 117-132), Հավասու (9. էջ 19), Աշոտի (10. էջ 468), Մահուրի Գևորգի (11. էջ 188) և ուրիշ աշուղների կյանքն ու ստեղծագործական արվեստը (շուրջ 30 գիտական հոդված): Այդ ուսումնասիրությունները հիմք հանդիսացան Մ. Մանուկյանի «Սովետահայ գուսանների երաժշտական ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսության համար, որն էլ հետագայում հրապարակվեց որպես մենագրություն (12. էջ 78): Մ. Մանուկյանի կազմած հայ աշուղական երգարվեստի ազգային դպրոցի ականավոր ներկայացուցիչ, ժողովրդական երգիչ՝ Զիվանու արվեստին նվիրված երկու ժողովածուներն առ այսօր մեծ արժեք են ներկայացնում (13.): Աշուղական արվեստին էր նվիրված նաև գրեթե ավարտված դոկտորական ատենախոսությունը, որը ցավոք, չի պահպանվել: Երկար տարիներ Մ.Մանուկյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության, ինչպես նաև ԵՊԿ-ի ժողովրդական ստեղծագործության բաժիններում, զբաղվել է բանահավաքչական աշխատանքներով, Խորհրդային

Զեկուցումն ընթերցվել է ԵՊԿ-100-ամյակին նվիրված ԵՊԿ ՈՒԳՍԸ գիտաժողովի շրջանակներում:
Երաշխավորվել է հրատարակության ԵՊԿ խմբագրական խորհրդի առաջարկով:

Հայաստանի տարբեր շրջաններում գիտական արշավախմբեր կազմակերպելով՝ ձայնագրել է հայ գեղջկական, հոգևոր և աշուղական ընդհանուր թվով շուրջ 2000 երգ: Մեփական գրառումները հետագայում հիմք դարձան Մ. Մանուկյանի արժեքավոր հետազոտությունների համար, որոնց շարքում են՝ ժողովրդական ավետիսներին (14.) և Գեղարքունիքի երաժշտական ֆոլկլորին (15.) նվիրված խիստ արժեքավոր ուսումնասիրությունները:

Քառորդ դարից ավելի (1982-2010 թթ.) Մանուկ Թորոսովիչը ղեկավարել է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի Երաժշտության տեսության և դասավանդման մեթոդիկայի ամբիոնը՝ արժանանալով «պատվավոր պրոֆեսորի» կոչմանը: Մ.Մանուկյանն առաջինն էր, ով իր մենագրություններում անդրադարձավ հայ կոմպոզիտորներ Անտոն Մայիլյանի (16.) և Սիմոն Հովհաննիսյանի (17.) կյանքին և գործունեությանը: Հայ երաժշտության բոլոր ճյուղերին վերաբերող նրա ծավալուն հոդվածն ընդգրկված է հեղինակավոր «The Garland Enciclopedia of World Music» Համաշխարհային Երաժշտության Հանրագիտարանի հատորում (18. էջ 721-740): Մ. Մանուկյանն իր ամբողջ ստեղծագործական ներուժը նվիրեց հայ ազգային երաժշտության ուսումնասիրմանը և մինչև իր կյանքի վերջ՝ որպես անխոնջ մշակ, ծառայեց հայրենիքին:

Ընտանիքը և պատանեկությունը

Մանուկ Թորոսի Մանուկյանը ծնվել է Բուխարեստում (Ռումինիա), 1927 թ-ի հունիսի 3-ին: Հայրը ծնունդով Հունաստանից էր, հետագայում տեղափոխվել էր Կ. Պոլիս, իսկ մայրական արմատներն Էրզրումից էին և 1890-ականների համիդյան ջարդերից հետո հիմնական բնակություն էին հաստատել Բուխարեստում: Հայերը Ռումինիայում հիմնավորվել են դեռևս X դարում, հավանաբար դա է պատճառը, որ տեղի հայկական համայնքը Հարավարևելյան Եվրոպայում հնագույններից է**: Մանուկի պապը վաճառական էր և արվեստը գնահատող մարդ: Բուխարեստի հայրական տանը կար «Hofmann» դաշնամուր, որի վրա նվագում էին տան գրեթե բոլոր անդամները: Մանուկի հայրը սովորել է Կ.Պոլսի հայկական Եսայան վարժարանում և թատրոնի մեծ սիրահար էր: Մասնակցել է Ա.Պենկլյանի*** թատերական ներկայացումներին, նույնիսկ մեկ բեմի վրա խաղացել է Հրաչյա Ներսիսյանի և Վահրամ Փափազյանի հետ: Մերը դեպի թատրոնը նրան չլքեց և 60-ականներին, երբ հայրենադարձ եղած ու արդեն տարիքն առած Թորոսը Երևանում բաց չէր թողնում Գ.Սունդուկյանի անվան թատրոնի և ոչ մի ներկայացում: Ավելին, նա Հ.Ներսիսյանի մտերիմներից էր և թատրոնում իր հատուկ նստատեղն ուներ:*

Մանուկի տատն ու մայրը երաժշտական օժտվածություն ունեին՝ հիանալի ձայն և կատարողական ձիրք: Դժվար էր պատկերացնել որևէ տոնական երեկո առանց ընտանիքի անդամների երաժշտական կատարումների: Հավանաբար, նրանցից էլ Մանուկը ժառանգել էր իր երաժշտական ունակություններն ու սերը դեպի արվեստը: Ապագա երաժշտագետի մանկությունն անցել է Բուխարեստի բազմամշակույթ միջավայրում, երբ ռումինացիների հետ հարևանությամբ ապրում էին այլ ազգեր: Մանուկի հայրը սեփական գործն ուներ խանութներ Բուխարեստում և Կ.Պոլսում, որտեղ վաճառում էր իր արտադրած կոշիկներն ու հողաթափերը: Ինքն էլ հիանալի ձևում՝ մոդելավորում և կարում էր կոշիկներ և Բուխարեստում հայտնի վարպետ էր: Մանուկը դեռահաս տղա էր, երբ պատրաստի ապրանքը տանում էր շուկա վաճառքի և բնատուր համեստությունը ստիպված հաղթահարելով՝ դժվարությամբ յուրացնում էր սակարկելու «արվեստը»: Ինչպես հետագայում կիսստոմանի Մ.Մանուկյանը, հենց այդ տարիքում է սկսել հասկանալ ազնիվ աշխատելու և կատարած աշխատանքի դիմաց վաստակած գումարի իրական արժեքը: Կաշվեղենի հետ աշխատելու և կոշիկ մոդելավորելու «փեշակին» փոքրուց տիրապետեց նաև Մանուկը: Արդեն Երևանում, ծանր 90-ականներին, կոշկակարությունը նրան շատ օգնեց հավելյալ գումար վաստակելու և ընտանիքը կերակրելու համար: Աշխատասիրությունն ու սերը դեպի արհեստը դեռևս մանկուց նրա մեջ դաստիարակել էին պապն ու հայրը՝ առաջնորդվելով հայտնի ասացվածքի կարգախոսով. «...լավ արհեստավորը մինչև կեսօր է սոված լինում»:

1935 թվականին կյանքից հեռացավ Մանուկի տակավին երիտասարդ մայրը՝ Արշալույսը (32 տարեկան) և ութամյա տղան ասես որբացավ: Մահից առաջ իր դստեր Մեդային, որը չորս տարով մեծ էր Մանուկից, խրատեց, որ նա եղբորը չլքի և որ քույր ու եղբայր երբեք չբաժանվեն: Տարիներ անց, երբ Մանուկը որոշում կայացրեց հայրենադարձ լինել (1948), Մեդան պահեց մորը տված խոստումը և եղբոր հետ մեկնեց Հայաստան: Սկզբնական կրթությունը Մանուկն ստացել է Բուխարեստի Միքայել և Գաբրիել Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցուն** կից անվճար դպրոցում, որը ռումինահայ միջավայրում*

---

* Խորհրդային Հայաստան գալուն պես անձնագրային բաժնում սխալմամբ գրել են 1924 թ. 5-ը հունիսի և Մ. Մանուկյանի հետագա պաշտոնական բոլոր փաստաթղթերն այդ վրիպակով են գրանցվել:

** Հայերի հոսքը Ռումինիա ուժեղացել է հատկապես Անիի (X դ.), ապա՝ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից (XV դ.) հետո: Այդ են վկայում հայկական բազմաթիվ տեղանունները, ինչպես նաև երբեմնի հայաշատ քաղաքներում հայկական թաղամասերի ու փողոցների առկայությունը: Ներկայումս Ռումինիայում բնակվում է շուրջ 3.000 հայ:

*** Արշակ Խաչատուրի Պենկլյան (1867, Կ. Պոլիս-1923, Կ.Պոլիս)՝ հայ թատերական գործիչ, դերասան, ռեժիսոր: Իսկական ազգանունն անհայտ է, բայց վայելելով Սերովբե Պենկլյանի հովանավորությունը, կրել է նրա ազգանունը: Խաղացանկում մեծ տեղ են գրավել Տ. Չուխաճյանի «Արիֆ», «Քյոսե Քեհյա», Ե. Օտյանի և Մ.Կյուրճյանի «Չարշըլը Արթին աղա» օպերետտները: Ա.Պենկլյանի ռեժիսորական վարպետությունը դրսևորվեց «Լեբլեբիջի»-ում, իսկ դերասանական գլուխգործոցը Հոր- հոր աղայի կերպարն էր:

* Կյանքի վերջին տարիներին Մեդան ծանր հիվանդ էր և ուներ հիշողության անկում. Մանուկը միակն էր, ում նա ճանաչում և հիշում էր:

** Առաջին հայկական եկեղեցին Բուխարեստում կոչվել է

հայտնի էր որպես Քեսիմյան դպրոց: Դպրոցում ուսումնասիրում էին ֆրանսերեն, ռուսերեն և գերմաներեն: Տարիներ անց երաժշտագետն այս առիթով նշել է.*

«Սորված եմ Միսաքյան-Գեսիմյան հայ դպրոցին մեջ: Մինչև հիմա մեծ ջերմությամբ կհիշեմ իմ ուսուցիչներուն: Երաժշտությանս ուսուցիչը խմբավար Գեղամ Ճերահյանն էր, որը կղեկավարեր նաև դպրոցի երգչախումբը: Մենք մեծ սիրով կմասնակցեինք այդ երգչախմբի պարապմունքներուն: Ընդհանրապես պրն. Գեղամի դասերը շատ հետաքրքիր ու բովանդակալից կանցնեին: Երբեմն ամբողջ պարապմունքը կանցներ զրույցի ձևով: Ան մեզ կպատմեր աքսորի ատեն եղեռնի ժամանակ իր զրկանքներով ու դժվարություններով անցուցած կյանքի դրվագները: Հաճախ այս տխուր հիշողությունները կզուգակցեին նշանավոր մարդոց՝ ինչպես Կոմիտասն է, կյանքի ու գործունեության պատմություններով: Այս բոլորը, մեզ, աշակերտներուս մեջ սեր ու հարգանք կդաստիրակեր մեր ժողովուրդի ու ազգային մշակույթի հանդեպ» (19. էջ 4):

*Այդ տարիներին դպրոցի տնօրենն էր գրող-բառարանագետ Արտաշես Տիրացյանը**, ում որդին՝ Գևորգ Տիրացյանը*** Մ.Մանուկյանի լավ բարեկամն էր, և նրանց մտերմությունը շարունակվեց նաև Հայաստանում: Հազարավոր հայրենադարձ եղած ռումինահայերից էին նաև Տիրացյանների ընտանիքը: Պահպանվել է դպրոցական տարիների մի ուշագրավ լուսանկար՝ Մանուկի ավարտական դասարանը և կենտրոնում նստած Ա. Տիրացյանը:*

Դեռահաս տարիքից Մանուկի մեջ նկատելի էր մեծ սերն ու ձգտումը դեպի ուսումը, որին զուգահեռ չէր նվազում նաև հետաքրքրությունը դեպի արհեստները: Արևմտահայության միջավայրում առհասարակ ընդունված էր, որ արվեստից զատ, տղաները պարտադիր յուրացնեն արհեստի առնվազն մեկ տեսակ, և Մ.Մանուկյանն ուսումը շարունակում է Բուխարեստի ազգային Արհեստների վարժարանում, որը կրում էր XVIII դ. Տրանսիլվանիայի լուսա վորյալ մարդկանցից մեկի՝ Գեորգե Շինկայի (George Sinkaj) անունը: Փայտամշակման բաժնում սովորելուն զուգահեռ նա սերտում է երաժշտական գիտելիքներն ու տարբեր գործիքներ՝ ջութակ, դաշնամուր, կլարնետ և հորոյ նվագելու կատարողական արվեստը: Ձեռքբերելով փայտի վրա փորագրելու վարպետություն՝ Մ. Մանուկյանն սկսում է ուսումնասիրել լարային աղեղնավոր գործիքների կառուցվածքը, խորասուզվում ջութակ և ալտ պատրաստելու տեխնիկապես բավականին բարդ և բազմափուլային գործընթացի մեջ:

Գ. Շինկայի անվ. լիցեյում սովորելու տարիները համընկան Համաշխարհային երկրորդ պատերազմի հետ: Մանուկն անդամագրվեց «Հայաստանյան ճակատ» ընկերությանը, որը հանդես էր գալիս Հայ դատի պաշտպանությամբ և մերկացնում Թուրքական կառավարության վարած քաղաքականությունը: Ինչպես ամբողջ Եվրոպան, Ռումինիան նույնպես ծանր վիճակում էր: Լույսի, հույսի և ապրելու եզակի առկայծումներից էին Բուխարեստը չլքած և մինչև վերջ իր հարազատ ժողովրդի կողքին մնացած աշխարհահռչակ ջութակահար, խմբավար և կոմպոզիտոր Ջորջե Էնեսկուի համերգները, որոնք տեղի էին ունենում այն ժամանակների չափանիշներով մեծ՝ 2000 տեղանոց կինոդահլիճում: Մ.Մանուկյանն իր հուշերում կգրի. «...ես և քույրս գնում էինք ավելի շուտ և նստում բեմի կողքը, հրշեջների տեղադրած ավագով լիքը արկղի վրա և Էնեսկուին տեսնում էինք պրոֆիլ: Մենք գնում էինք նաև շաբաթ օրերը, նույն ժամին, գլխավոր փորձերին: Մուտքն ազատ էր, միայն ծափահարելու իրավունք չունեինք...» (4. էջ 4-6): Ջ. Էնեսկուն իրականացնում էր Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայի (1943 թ.) փորձերը և նախապատրաստում առաջնանվագը: Շնորհիվ նրա ջանքերի ռումինացիները ճանաչեցին և սիրեցին հայ երաժշտությունը: Ա. Խաչատրյանն ու Ջ. Էնեսկուն լավ բարեկամներ էին: Նա առաջինն էր, ով Բուխարեստում կատարեց հայ մեծ կոմպոզիտորի ստեղծագործությունները՝ Առաջին Սիմֆոնիան (1936 թ.) և Ջութակի Կոնցերտը (1940 թ.), հետագայում դրանք կայուն կերպով ընդգրկելով իր երկացանկի մեջ:*

Բըրբթիա՝ Եղբայրություն անունով, 1581-1629 թթ., որը հավասարապես ծառայում էր ուղղափառ և կաթոլիկ հավատացյալներին: Երբ 1638թ. այն անցավ կաթոլիկ եկեղեցու տնօրինությանը, ուղղափառ հայերը կառուցեցին մեկ այլ՝ փայտե եկեղեցի: Բուխարեստի Սուրբ Հրեշտակապետաց ներկա եկեղեցին կառուցվեց 1911-1915թթ. նույն տեղում, ցեղասպանությունից փրկված հայերի միջոցներով, ճարտարապետ Գրիգոր Չերքեզի նախագծով:

* Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանը հիմնադրվել է ռումինահայ մեծահարուստներ՝ Վարդերես Միսաքյանի (1847), իսկ հետագայում նաև Մարիամ Քեսիմի նվիրատվություններով

(1926), որի առաջին տնօրենը եղել է Վրթանես Փափազյանը: Նույն դպրոցի շրջանավարտն էր Լևոն Կարապետ Պալճյանը, հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Բուխարեստցին: Խորհրդային Հայաստան կատարած ներգաղթից հետո (1946-1948) դպրոցի աշակերտների թիվը խիստ նվազել է:

** Տիրացյան Արտաշես Գևորգի (1889, Բուլղարիա -1974, Երևան)՝ հասարակական գործիչ, հրապարակախոս: Տնտեսական գիտությունների դոկտոր (1920), պատմական գիտությունների թեկնածու (1953), Գերագույն հոգևոր խորհրդի անդամ (1955): Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտելով, կրթությունը շարունակել է Բեռլինի, Լոզանի, Ցյուրիխի համալսարաններում: Դասավանդել է Երևանի ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում (ներկայիս՝ Վ.Բրյուսովի անվ.ինստիտուտ): Գերմաներենի դասագրքերի հեղինակ է (20. էջ 96-97):

*** Տիրացյան Գևորգ Արտաշեսի (18.09.1926, Ռումինիա - 17.01.1993, Երևան)՝ հայ հնագետ, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր: Դրաստամատ Կանայանի ազգականներից էր: Հնագետի աշխարհայացքի և գիտական հետաքրքրությունների ձևավորման հարցում մեծ ազդեցություն է ունեցել նրա գիտական

ղեկավար Բորիս Պիոտրովսկին: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադիրներից մեկն էր, ով ստեղծման առաջին օրերից (1959) մինչև կյանքի վերջն աշխատել է այդ ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ գիտաշխատող, այնուհետև՝ տնօրեն (1988-1993):

* 1946-1950 թթ. ընկերությունը Բուխարեստում հրապարակել է հասարակական և քաղաքական ուղղվածությամբ նույնանուն շաբաթաթերթ:

Տարիներ անց, 2004-ի հունվարի 24-ին, ԵՊԿ-ի Օպերային ստուդիայի դահլիճում, Ռումինիայի միավորման նշանակալից օրվա կապակցությամբ, կայացավ համերգ-հանդիպում՝ նվիրված Ջորջե Էնեսկուի հիշատակին, որին ներկա էին Ռումինիայի դեսպանության աշխատողները և ՀՀ Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլայե Իորդակեն (3. էջ 2-3): Միջոցառումը կազմակերպեց երաժշտագետ Գոհար Շագոյանը, ում մեծապես աջակից եղավ նաև ինքը՝ Մ. Մանուկյանը: Պետք է նշել, որ իր ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում Մ.Մանուկյանը խորապես նպաստել է Հայ-ռումինական կապերի ամրապնդմանը:

ՄԱՐԻԱՆՆԱ ԱԼԲԵՐՏԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
E-meil: tigranyan.marianna@mail.ru

1948-1955 թթ.-ին Ռումինիայի հայոց թեմական առաջնորդն էր Վազգեն Պալճյանը (1955–1994 թթ.-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Բուխարեստցին), ով մեծապես նպաստեց ռումինահայ համայնքին հայրենադարձ լինելուն: Առաջին մեծ հոսքը եղավ 1946-ին, իսկ երկրորդը՝ երկու տարի անց: Իր ուսուցչի ոգեշունչ կոչերը չէին կարող անպատասխան մնալ, և Մանուկը որոշում կայացրեց գալ Հայաստան: 1948-ի ամռանը Բուխարեստից Կոստանցա, ապա Բաթում ժամանեց «Արմենիա» շոգենավը: Մանուկը եկել էր ընդմիշտ և հետը բերել էր ոչ միայն հայրական տան «Hofmann» դաշնամուրը, այլ նաև իր բոլոր երաժշտական գործիքները: 21-ամյա Մանուկը, քրոջ՝ Մեդայի և փեսայի հետ, հայրենադարձ եղան և հաստատվեցին Երևանում: Ներկայիս Բլուր թաղամասում (Արաբկիր), Կինյան-Սևաստոպոլյան 39 հասցեով, Մանուկյանները ստացան մի հողատարածք, որտեղ անձնական միջոցներով և ուժերով նախաձեռնեցին սեփական տան կառուցման աշխատանքները: Մանուկի պես մարդկանց մասին ժողովուրդն ասում է. «ձեռքից ոսկի է թափվում»: Փայտամշակման տեխնիկումում ստացած գիտելիքներն ավելի քան տեղին էին. ամբողջ տան պահարաններն ու կահավորանքը Մանուկն իր ձեռքերով կառուցեց:

Ժամանակը չկորցնելով, 1949-ին Մանուկն ընդունվում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի փողային բաժնի կլարնետի դասարան, որն ավարտելուց հետո (1953 թ.) կրթությունը շարունակում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատմության և կոմպոզիցիայի բաժնում (1953-1958 թթ.), դիպլոմային աշխատանք ներկայացնելով «Սպիրիդոն Մելիքյանի երաժշտագիտական, ազգագրական և խմբավարական գործունեությունը» թեմայով ուսումնասիրությունը: Դեռ ուսանողական տարիներին, հայ ժողովրդական երաժշտության հանդեպ նրա ցուցաբերած հետաքրքրություններից արդեն պարզ էր, թե երաժշտագետի հետագա ուսումնասիրությունները որ ուղղությամբ են զարգանալու: Նկատելով երիտասարդի մեծ ձգտումն ու երաժշտական ունակությունները՝ Մարգարիտ Բրուտյանը միջնորդում է, և կոնսերվատորիան դեռ չավարտած Մ.Մանուկյանն ընդունվում է աշխատանքի կոմպոզիցիայի և երաժշտության տեսության բաժնին կից ժողովրդական ստեղծագործության կաբինետում որպես օգնական՝ ասիստենտ (22.): Կոնսերվատորիային զուգահեռ՝ Մ. Մանուկյանին բարձր աշխատավարձով հրավիրում են ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին կից ռադիոհաղորդումների և հեռուստատեսության կոմիտե, որպես երաժշտության խմբագիր, որտեղ նա պետք է վարեր հայ աշուղներին և հայկական աշուղական երգարվեստին նվիրված հեղինակային հաղորդումներ*: Աշխատանքային մեկ տարին չբոլորած, նա ազատվում է այդ աշխատանքից և ԳԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնում հաստատվում՝ սկզբից որպես ավագ լաբորանտ (23.), այնուհետև կրտսեր գիտաշխատող (24.):*

*Մ. Մանուկյանը հասուն տարիքում էր, երբ որոշում կայացրեց ամուսնանալ: Ինչպես հարիր է պատվախնդիր տղամարդուն, նա իր առջև ծառացած բոլոր հարցերն ու խնդիրները լուծում էր ինքնուրույն, առաջնորդվելով հոր կարգախոսով. «այն, ինչ կարող ես ինքդ անել, երբեք ուրիշից մի խնդրիր»: Համեստ միջոցներով կազմակերպեց մի գեղեցիկ հյուրասիրություն (Մանուկը նաև հիանալի խոհարար էր), իսկ ամուսնական մատանին գնեց սիրելի կլարնետի վաճառքից ստացած գումարով: Կինը՝ Միլվան, երգ-երաժշտության մասնագետ էր, երկար տարիներ դասավանդել է անգլիական հատուկ թեքումով դպրոցում: Նրանց առաջնեկը ծնվեց 1961-ին, և Մանուկի հոր պատվին անունը դրեցին Թորոս, իսկ 1967-ին դուստրը՝ Զարուհին**: Տարիներ անց Զարուհին հիշում է. «Ընտանեկան բոլոր միջոցառումներին հայրս թամադա էր, մշտապես կատակում էր, պատմություններ պատմում: Մահվանից մոտավորապես մի ութ ամիս առաջ զրուցում էինք, ասեց. «երանի թե ես մի հինգ տարի երիտասարդ լինեի, Ռազմիկն էլ մի հինգ տարի մեծ լիներ, փորագրել սովորեցնեի» ...Յանկացած հարցում մշտապես եղել է մեր կողքին և զավակների որոշումները հարգելով՝ ամեն հարցում սատարել և աջակցել» (**):*

Մ. Մանուկյանն ավելի մեծ եռանդով է շարունակում իր բանահավաքչական և մանկավարժական աշխատանքները: Նրա գիտական գործունեությանը մեծապես նպաստեց ՀԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի արվեստների պատմության և տեսության Սեկտորը՝ ներկայիս ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, որտեղ նա 20 տարուց ավելի անխոնջ աշխատեց (1959-1982 թթ.), վերջին տարին նշանակվելով

---

* Գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Հարությունյան (21.):

* Պաշտոնական հրամանը ստորագրված է 1958-ի օգոստոսի 30-ից մինչև 1959-ի մայիսի 20-ը:

** Թորոսն ավարտել է Պետհամալսարանի ռադիոֆիզիկայի բաժինը, այժմ բնակվում է Գերմանիայում, իսկ Զարուհին Խ. Աբովյանի անվ. Մանկավարժական ինստիտուտի Արվեստի բաժինը: Հոր մահից հետո Զարուհին նույնպես:

ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ (25): Գիտական գործունեությունից զատ Մ. Մանուկյանն ինստիտուտի կուսակցական կազմակերպության բյուրոյի քարտուղարն էր և ակտիվ կերպով մասնակցում էր ինստիտուտի հասարակական-քաղաքական աշխատանքներին: Այդ ժամանակաշրջանում նա զուգահեռաբար աշխատում էր նաև ԵՊԿ-ի ժողովրդական երաժշտության կաբինետում (1988-ից՝ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոն) և գիտական գործունեությունից բացի, կազմակերպում և իրականացնում գիտարշավներ, Խորհրդային Հայաստանի՝ Միկոյանի (այժմ Եղեգնաձորի), Արթիկի, Ստեփանավանի, Կարմիրի, Ղուկասյանի, Վեդի-Արարատի և նրա սահմաններից դուրս հայաբնակ վայրերում՝ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայաբնակ գյուղերում, Նոր-Նախիջևանի և այլ շրջաններում ձայնագրելով թվով շուրջ 2000 գեղջկական, հոգևոր և աշուղական եզրեր և պարեղանակներ: Այդ ձայնագրություններն անձեռնմխելիորեն պահվում են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում՝ Մ.Մանուկյանի ֆոնդում, ինչպես նաև ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնադարանում:

1981 թ. Մ. Մանուկյանին հրավիրեցին Խ.Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտ, որպես Երաժշտության տեսության և դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Այդ պաշտոնում Մանուկ Թորոսովիչը վերընտրվեց մի քանի անգամ և քառորդ դարից ավելի (1982-2010 թթ.) ծառայեց սիրելի բուհ-ին՝ արժանանալով «պատվավոր պրոֆեսորի» կոչմանը: Նա մինչև իր կյանքի վերջին օրն անտրտունջ աշխատում էր, ակտիվ մասնակցում գիտաժողովներին, շարունակում կատարել իր երաժշտագիտական ուսումնասիրությունները, գրում հոդվածներ և հրատարակում գիտական տարբեր պարբերականներում:

Ջութակ պատրաստելու արհեստը, որը Մ.Մանուկյանը ձեռք էր բերել դեռևս Բուխարեստում, նա հասցնում է կատարելության: Երաժշտագետի պատրաստած գործիքներով նվագել են մի շարք անվանի երաժիշտներ, որոնց թվում էր նաև Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի ջութակահար, ԵՊԿ դասախոս Հակոբ Սանդալջյանը՝ անվանի դերասան Խաչիկ Սանդալջյանի** որդին:* Մ.Մանուկյանը ոչ միայն սովորական չափերի ջութակ էր պատրաստում, այլ նաև մանկական: Այդպես, օրինակ, Ք. Քուշնարյանի անվան երաժշտական դպրոցում մանկական ջութակների մեծ պահանջարկ կար, և նա սաների համար պատրաստում էր աշակերտական 1/2 չափի ջութակներ:

Մ.Մանուկյանը չափազանց համեստ անձնավորություն էր և իր կատարած աշխատանքների կարևորության մասին հաճախ պարզապես լռում էր: Որպես կանոն, նման «լռությունները» ճակատագրական են լինում և պատմության էջերից պարզապես ջնջում նվիրյալ անուններ: Թեև մեր խոսքերը վավերացնող պաշտոնական որևէ աղբյուր չենք կարող մեջբերել, այդուհանդերձ, անվանի և հեղինակավոր երաժիշտների վկայությամբ, Մ.Մանուկյանը մեծ գործ է կատարել Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության նախապատրաստման ուղղությամբ: Կոմիտասի ձայնագրած ժողովրդական երգերը հայկական ձայնանիշերից փոխադրելով եվրոպական նոտաների՝ նա մեծապես նպաստել է Ռ. Աթայանի նախաձեռնած Կոմիտաս Վարդապետի ստեղծագործական ժառանգությունն ուսումնասիրելու և լուսաբանելու աշխատանքներին:

Անսահման սիրով լցված էր դեպի Հայաստանն ու հայրենի բնությունը: Ամառային արձակուրդները Մ.Մանուկյանն ընտանիքի հետ սիրում էր անցկացնել Դիլիջանի Կոմպոզիտորների Ստեղծագործական տանը: Նույնիսկ ձևավորվել էր մի «խումբ»՝ կոմպոզիտորներ Սիմոն Հովհաննիսյանի, Մանվել Բեգլարյանի, Ռոմեն Դավթյանի և Ռուսլան Գալստյանի ընտանիքները, ովքեր պայմանավորվածության համաձայն՝ հանգստի համար նախատեսում էին օգոստոս ամիսը, որպեսզի միասին լինեն:

Երեկոներն անցկացնում էին միմյանց «քոթեջներ» այցելություններով և հյուրասիրություններով: Մեծ հաջողություն էին վայելում տիկին Միլվայի պատրաստած յուրահատուկ ճաշատեսակներն ու աղցանները, որոնց անունը դնում էին «Միլվա»: Մտերմություն էին անում ոչ միայն մեծերը, այլ նաև երեխաները և ամառային արձակուրդներն ավարտվելուն պես ընկերությունը շարունակում Երևանում:

Բնության մեծ սիրահար էր, խնամում էր սեփական հողակտորի վրա իր փոքրիկ պարտեզը, տարբեր բույսեր և ծաղիկներ տնկում: Մի օր տուն վերադառնալիս, գրպանից ինչ-որ թաշկինակ է հանում մեջն էլ շիվ. «... թե քայլելուց գետնին տեսնեմ ջարդված լիմոն, մտածեցի՝ բերեմ, դնեմ ջրի մեջ»: Եվ իրապես, մշակեց, խնամեց, պատվաստեց և այդ շիվը մի հսկայական կիտրոնի ծառի վերածվելով՝ դարձավ կարծես ընտանիքի անդամ, որի անունը դրել էին Լիմոն Պետրովիչ: Այդ ծառը սիրով խնամում էր նաև Մ. Մանուկյանի կինը՝ Միլվան, տարվա տաք ամիսներին հանում այգի, իսկ աշնան ցուրտ օրերը սկսվելուն պես բերում տուն: 2000-ի դեկտեմբերի 25-ին կյանքից հեռացավ Միլվան: Սիրելի կնոջ կորստի վիշտն աննկարագրելի էր: Մանուկն ամբողջովին խորասուզվեց աշխատանքի մեջ, և խնամքից զուրկ մնացած «Լիմոն Պետրովիչը» ցրտահարվեց: Ծառը հետզհետե նվազում էր, չնայած որ վրան դեռ կախված էին մեծ պտուղները. Դուստրը՝

---

* Հ. Սանդալջյանը (1931, Ալեքսանդրիա-1990, Լոս-Անջելես) հայտնի է իր մանրաքանդակներով՝ միկրոմինիատյուրաներով, որոնք տեղադրված են Լոս Անջելեսի թանգարաններից մեկում («Museum of Jurassic Technology»): Սանդալջյանի աշխատանքներից են բրնձի հատիկի վրա քանդակված «Արարատ լեռը», «Խաչելությունը», որտեղ պատկերված է Հիսուսի մանրաքանդակը խաչի վրա (Սանդալջյանի մազափնջից), ինչպես նաև Դիսնեյի հերոսների կերպարները («Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները», «Միքի Մաուսը» ևն): Քանդակներն արված են ասեղի ծայրին կամ ասեղի անցքի մեջ:

** 39. Խաչիկ Սանդալջյանի (1897, Ալեքսանդրիա-1965, Երևան) ստեղծագործական ուղին համընկավ Եգիպտոսի հայ թատրոնի զարգացման հիմնական փուլերի հետ: Հայրենադարձությունից հետո եղել է Հ. Պարոնյանի անվ. Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասան, նկարահանվել ֆիլմերում:

Զարուհին առաջարկեց անուշահոտ կիտրոնները դնել սեղանին, իսկ չորացած ծառը կտրել, բայց հայրն այդ մտքի հետ չհամակերպվեց, հույս փայփայելով, որ դեռ կառողջանա: Զարմանալի զուգադիպությամբ ապրիլին, կնոջ ծննդյան նույն օրը, ծառից պոկվեց վերջին պտուղը և «Լիմոն Պետրովիչը» չորացավ...

90-ականները ծանր տարիներ էին. մի կողմից՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի չսպիացող վերքերը, մյուս կողմից՝ Արցախյան պատերազմում հերոսաբար ընկած տղերքը... Տնտեսապես կազմալուծված և հոգեպես քայքայված, բայց անկախ դարձած Հայաստանը գոյատևում էր: Մարդիկ փորձում էին ապրել, բայց արժանապատիվ ապրել: Դժվարին փորձությունները հաղթահարում էր նաև Մ. Մանուկյանը. մանկավարժական ինստիտուտում դասերն ավարտելուն պես շտապում էր տուն և երեկոյան ժամերին, մոմի լույսի տակ, սկսում իր կրուձևը: Նրան պատվերներ շատ էին տալիս, որովհետև վստահում էին այդ բարեխիղճ և վերին աստիճանի ազնիվ մարդուն: Այդ տարիներին նաև փայտից պատրաստում էր կոճակներ, փոքրիկ խաչքարեր և ազգային ոճով հուշանվերներ, փորագրում և հանձնում վաճառքի: Այդպիսի երեկոներից մեկին փոստատարը թակեց դուռը և նամակ բերեց, որտեղ ամերիկյան մի հեղինակավոր խմբագրությունից Մ. Մանուկյանին առաջարկ էր արվում հայ երաժշտության մասին անգլերենով գրել հոդված: Առանց վարանելու, նա համաձայնություն է հայտնում և իրեն բնորոշ նվիրումով և խանդավառությամբ անմիջապես անցնում գործի: Գիտակցելով սեփական պատասխանատվությունն ու լուսաբանվող նյութի կարևորությունը Մ.Մանուկյանը ջանում էր հասնել կատարելության: Անգլերենով արված թարգմանությունը չհավանելով՝ նա սկսում է բառարաններով ինքնուրույն աշխատել. կրկնակի, ավելի ճիշտ եռակի աշխատանք կատարելով և օգնության «կանչելով» ֆրանսերենի իր փայլուն իմացությունը՝ նա հայերենից թարգմանում է ֆրանսերեն և համեմատական զուգահեռներ անցկացնելով, վերաթարգմանում սեփական աշխատանքը: Նոտային օրինակներով, քարտեզով և լուսանկարներով հագեցած հոդվածը հետզհետե աճում էր, խախտելով համաձայնեցված ծավալները: Մ.Մանուկյանը նամակով դիմում է հրատարակիչներին, խնդրելով նախատեսված մամուլն ընդլայնել և ստանում դրական պատասխան: Ավարտված հոդվածում հայ երաժշտությունը ներկայացված էր հինգ մասով՝ պատմական, տեսական ակնարկներով և գեղջկական, աշուղական, հոգևոր երաժշտության բաժիններով: Եվ ահա մի օր փոստատարը դուռը կրկին թակեց և Մ.Մանուկյանին հանձնեց ծանուցագիր առ այն, որ ԱՄՆ-ից փաթեթավորված փոստային առաքում ունի: Որքան էր մեծ նրա հիացմունքը, երբ ծանրոցում Համաշխարհային Երաժշտության Հանրագիտարանի («The Garland Enciclopedia of World Music») շքեղ հատորն էր (26.): 1999-ին Հայաստանում բացվեց Ռումինիայի դեսպանատունը, և հիմնադրման օրից Մ.Մանուկյանը սերտ համագործակցության մեջ էր դեսպանատան աշխատակիցների հետ: Յավոք, այդ նշանակալից իրադարձությանն ականատես չեղավ Վազգեն Ա կաթողիկոսը, ով երկարամյա ազգանվեր գործունեության ընթացքում ջանք ու եռանդ չխնայեց հայ-ռումինական կապերի ամրապնդման համար: Երկար տարիներ Մ.Մանուկյանն այդ դեսպանատան թարգմանիչներից էր: Լեզուների փայլուն իմացությունը (հայերեն, ռումիներեն, ֆրանսերեն, ռուսերեն), տարբեր ոլորտներում բազմակողմանի գիտելիքները, ինչպես նաև հավասարակշռված կեցվածքն ու մեղմ բնավորությունը թարգմանչական գործում պարզապես անգնահատելի էին: Այդ իսկ պատճառով, առանց պարոն Մանուկի ներկայության դեսպանատան ոչ մի նշանակալից միջոցառում տեղի չէր ունենում: Բացի պաշտոնական հանդիպումներից, Մ.Մանուկյանն ապահովում էր նաև զանազան հոդվածների, աշխատությունների, և ամենակարևորը՝ Բուխարեստում ռումիներեն հրատարակվող «Արարատ» ամսագրի թարգմանությունները:*

Մինչև իր կյանքի վերջին օրը Մ.Մանուկյանը շարունակում էր աշխատել: Նրա սիրտը դադարեց բաբախել 2010 թ. դեկտեմբերի 11-ին (86 տարեկան): Բոլոր նրանք, ով առիթ են ունեցել ճանաչել Մ. Մանուկյանին, միաբերան հաստատում են նրա բարձր մարդկային հատկանիշները, ազնվությունը, բարությունը, գիտական պարկեշտությունն ու անսահման սերը դեպի հայրենիքը: Խորամուխ լինելով ուսումնասիրվող թեմայի և դրա շուրջ ծառացած խնդիրների մեջ՝ Մ. Մանուկյանը ցուցաբերում էր համառություն և հետևողականություն, փորձելով բացահայտել լուծման նոր ուղիներ: Մեղվաջան աշխատող և իսկական նվիրյալ Մ.Մանուկյանն իր կյանքը, ամբողջ ստեղծագործական ներուժն ու եռանդը նվիրեց հարազատ ժողովրդի երաժշտության ուսումնասիրման և պահպանման գործընթացին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական երաժշտական հանրագիտարան, /Խմբ.՝ Հ. Այվազյան, Եր., ՀՀ ԳԱԱ, 2019 թ., - 711 էջ: Haykakan yerazhshtakan hanragitaran, /Khmb. - H. Ayvazyan, Yer., HH GAA, 2019 th., -711 ejj.
2. Հայ մոնոդիկ երաժշտության մատենագիտություն (1794-1990 թթ.), /կազմ.՝ Մ. Բրուտյան, Հ. Էլոյան, Եր., 1991 թ., - 330 էջ: Hay monodik yerazhshtuthyan matenagituthyun (1794-1990 thth.), /kazm.- M. Brutyan, H Eloyan, Yer., 1991 th., - 330 ejj.
3. Շագոյան Գ. Կ., Ռումինիայի օրը ԵՊԿ-ում //Երաժշտական Հայաստան, Եր., 2004, N 2 (13), - 52 էջ: Shagoyan G. K., Ruminiayi 0r' YPK-um //Yerazhshtakan Hayastan, Yer., 2004, N 2 (13), - 52 ejj.
4. Մանուկյան Մ. Թ., Ջորջե Էնեսկու (1881-1955 թթ.). Ռումինիայի օրը ԵՊԿ-ում, //Երաժշտական Հայաստան, Ե., 2004, N 2 (13), - 52 էջ: Manukyan M. Th., RJorje Enesku (1881-1955 thth.) Ruminiayi 0r' YPK-um, //Yerazhshtakan Hayastan, Yer., 2004, N 2 (13), -52 ejj. Arakelian Hakop, In memoriam Manuc Manuchian //Ararat, Periodical al Uniunii Armenilor din Romania, 29 December, 2010.
5. Մանուկյան Մ. Թ., Սայաթ-Նովայի մեղեդիները, //Սովետական Հայաստան, N 9, Եր., 1955 թ.: Manukyan M. Th., Sayath-Novayi meghediner', //Sovetakan Hayastan, N 9, Yer., 1955 th.

* «Ararat» ամսագիրն առաջին անգամ լույս է տեսել 1924-ին՝ հրապարակագիր Վարդան Մեսթուճյանի ղեկավարությամբ: Այն լույս տեսավ մինչև 1942-ը, երբ դադարեցվեց ամսագրի հրատարակումը: 1990-ից «Ararat» հրատարակումն ապահովեց Արշակ Պոկտան-Քրուշը:

6. Մանուկյան Մ. Թ., Գուսան Շերամ. Առանձնատիպ, //Տեղեկագիր (Հասարակական գիտությունների), ՀՍՍՀ ԳԱ, N 8, Եր., 1962 թ.: Manukyan M. Th., Gusan Sheram. Arandznatip, //Teghekagir (Hasarakakan gituthyunneri), HAAH GA, N 8, Yer., 1962 th.
7. Մանուկյան Մ. Թ., Շահեն (Սարգսյան Շահեն), գուսան, ՀՍՀ, h. 8, ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1982 թ., - 719 էջ: Manukyan M. Th., Shahen (Sargsyan Shahen), gusan, HSH, h. 8, HSSH GA, Yer., 1982 th., - 719 ejj.
8. Մանուկյան Մ. Թ., Աշուղ Շիրինի երգերի մեղեդիները, //Պատմա-բանասիրական հանդես /ՀՍՍՀ ԳԱ, N 3, Եր., 1976 թ., - 280 էջ: Manukyan M. Th., Asugh Shirini yergeri meghediner', //Patma-banasirakan handes, HSSH GA, N 3, Yer., 1976 th., - 280 ejj.
9. Մանուկյան Մ. Թ., Հավասի-100. Մշտահունչ քնար, //Երաժշտական Հայաստան, Եր., 1998 թ., N 1 (1), - 42 էջ: Manukyan M. Th., Havasi-100. Mshtashunch qnar, //Yerazhshtakan Hayastan, Yer., 1998., N 1 (1), - 42 ejj.
10. Մանուկյան Մ. Թ., Աշոտ աշուղ (Աշոտ Դադալյան), ՀՍՀ, h. 1., ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1974 թ., - 720 էջ: Manukyan M. Th., Ashot ashugh (Ashot Dadalyan), HSH, h. 1., HSSH GA, Yer., 1974 th., - 720 ejj.
11. Մանուկյան Մ. Թ., Սահակյան Ա. Շ., Մահուբի Գևորգ (Մանուկյան Գևորգ) աշուղ, ՀՍՀ, h. 7., ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1981 թ., -720 էջ: Manukyan M. Th., SahakyanA. Sh., Mahubi Gevorg (Manukyan Gevorg) ashugh, HSH, h. 7., HSSH GA, Yer., 1981 th., - 720 ejj.
12. ԾՈվցՍՎվ Ծ. Զ., թցրՈվօ ԸՐՎպվՌՌ., Ծ.: hՏՉպՑրՍՌռ ՍՏՎ-տՏջՌՑՏՐ, 1977., - 78 p. Manukyan M. T., Gusany Armenii., M.: Sovetskij kompozitor, 1977., -78 s.
13. ա. Ջիվանի. Երգեր /Առաջաբանը՝ Ա. Վ. Սահակյան, երաժշտ. մասը՝ Մ. Թ. Մանուկյան (20 նոտային հավելված), Եր., Սովետական գրող, 1988 թ.: Jivani. Yerger /Arajaban'- A. V. Sahakyan, yerazhsht. mas' - M. Th. Manukyan (20 notayin havelvats), Yer., Sovetakan grugh, 1988 th.
բ. Մանուկյան Մ. Թ., Ջիվանի. Ձայնագրյալ երգարան, Եր., 1998 թ., - 188 էջ: Manukyan M. Th., Jivani. Dzhaynagryal yergaran, Yer., 1998 th.
14. Մանուկյան Մ. Թ., Ժողովրդական ավետիսներ, Էջմիածին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 1995 թ., - 127 էջ: Manukyan M. Th., Zhoghovrdakan avetisner Ejjmiatsin, Mayr Ator Sb. Ejjmiatsin, 1995 th., -127 ejj.
15. Մանուկյան Մ. Թ., Մարտունու շրջանի ժողովրդական երգեր (1974-1977 թթ. Գիտարշավի նյութերից), Եր., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 1997 թ., - 192 էջ: Manukyan M. Th., Martunu shrjani zoghovrdakan yerger (1974-1977 thth. Gitarshavi nyutheritz), Yer., HHGAA Arvesti Institut, 1997 th., -192 ejj.
16. Մանուկյան Մ. Թ., Անտոն Մայիլյան. Կյանքն ու գործունեությունը, /խմբ.՝ Մ. Մուրադյան, Եր., Հայաստան, 1965 թ., - 83 էջ: Manukyan M. Th., Anton Mailyan. Kyanqn u gurtsuneuthyun', /khmb.- M. Muradyan, Yer., Hayastan, 1965 th., - 83 ejj.
17. Մանուկյան Մ. Թ., Սիմոն Հովհաննիսյան, Եր., Նաիրի, 2000 թ., -100 էջ: Manukyan M. Th., Simon Hovhannisyan, Yer., Nairi, 2000 th., -100 ejj.
18. Manoukyan Manouk, Music of Armenia (Section 4) //The Garland Encyclopedia of World Music. The Middle East, Volume 6, Editors: Virginia Danielson, Scott Marcus, Dwight Reynolds, New-York, "Routledge" company, 2002, P. 721-740.
19. Նեվրուզյան Ս., Հարցազրույց երաժշտագետ Մանուկ Մանուկյանի հետ, //Նոր Կյանք, Բուխարեստ, 2002, N 7-8: Nevruzyan S., Hartzazruytz yerazhshtaget Manuk Manukyani het, //Nor Kyanq, Bukharest, 2002, N 7 -8.
20 Քոլանջյան Ս., Ա. Գ. Տիրացյան //Էջմիածին, 1974, N 7-8: Qolanjyan S., A. G. Tiratzyan //Ejjmiatsin, 1974, N 7-8.
21. ԵՊԿ, Դիպլոմային աշխատանք N-47, 1958, -106 էջ:
22. ԵՊԿ-ի արխիվ, Հրաման N 53, հաստատված է 03. 03.1958 թ.:
23. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ, Հրաման N 34, 15.04.1959:
24. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ, Հրաման N 57, 25.06.1959:
25. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ, Հրաման N 13, կետ 2, 16 հունվարի, 1981թ.:
26. Manoukyan Manouk, Music of Armenia (Section 4) //The Garland Encyclopedia of World Music. The Middle East, Volume 6, Editors: Virginia Danielson, Scott Marcus, Dwight Reynolds, New-York, ,Routledgeեեե

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Տեղեկություններ հեղինակի մասին. *ՏԻԳՐԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ ԱԼԲԵՐՏԻ (ծ. 23.6.1971թ. ք. Երևան): Ավարտել է՝ Երևանի Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (1995 թ.), որպես դիպլոմային աշխատանք ներկայացնելով՝ « «Սասնա ծռեր» էպոսից երգվող հատվածներ» ուսումնասիրությունը (ղեկ.՝ Ա. Ա. Փահլևանյան): Աշխատել է՝ Հայաստանի ազգային ռադիոյի «Հայաստանի ձայն» գործակալության մշակույթի խմբագրությունում (1994-1995 թթ.), վարել է հայ ժողովրդական երգաստեղծության ժանրերի մասին հեղինակային հաղորդաշար (հայերեն, ռուսերեն), որը հեռարձակվել է նաև Սիբիրում: Դասավանդել է՝ Արմավիրի արվեստի պետական ուսումնարանում (այժմ՝ քոլեջ), ղեկավարելով երաժշտատեսական առարկաների բաժինը (վարիչ՝ 1995-2005 թթ.): Կազմակերպելով բազմաթիվ երաժշտաստեղծագործական միջոցառումներ դպրոցականների և ուսանողների համար, բազմիցս արժանացել է պատվոգրերի և բարձրագույն մրցանակների: Որպես հրավիրված մասնագետ, ղեկավարել է Նաիրիի շրջանի Եղվարդի ՄԵԴ պատմատեսական բաժինը (1997-1998 թթ.), դասավանդելով տեսական առարկաներ: Ասպիրանտուրայում սովորելու տարիներին (2002-2005 թթ.) խորամուխ է եղել հայ ֆոլկլորագիտության հարցերում, ուսումնասիրության նյութ ընտրելով հայկական հարսանեկան ծեսի առանձնահատկությունները: 2004-ից դասավանդում է ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում: 2010-ից աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ ԱԻ ժողովրդական երաժշտության բաժնում որպես գիտաշխատող: Թեկնածուական գիտական աստիճանի հայցման համար ներկայացրել է «Հայոց ավանդական հարսանեկան զոլիքերը հնագույն ծեսի համատեքստում» ատենախոսությունը (2016 թ.): Նա գիտական զեկույցներով և ելույթ-դասախոսություններով հանդես է եկել ներբուհական և միջազգային գիտաժողովներում (Փարիզ, Ս.-Պետերբուրգ, Մոսկվա), 2018-ին Ս.-Պետերբուրգում Ն. Ռիմսկի-Կորսակովի անվ. կոնսերվատորիայի հնագույն ռուսական երգեցողության ամբիոնի հրավերով Հայ ժողովրդական ստեղծագործությանը, ինչպես նաև պատմատեսական հարցերին վերաբերող հեղինակի ավելի քան 30 հոդվածները հրապարակվել են գրախոսվող ամսագրերում:*

Сведения об авторе: *ТИГРАНЯН МАРИАННА АЛЬБЕРТОВНА (род. 23 июня 1971, Ереван). Окончила: Ереванскую гос. консерваторию им. Комитаса, отделение музыковедения (1995). Дипломная работа «Поющиеся отрывки из эпоса “Сасунские удальцы”» (научн.рук., проф. А.Пахлеванян); аспирантуру ЕГК, тема - армянская традиционная свадебная обрядовая музыка (2005). Вела авторский цикл передач о жанровых особенностях армянского народного песнетворчества в музыкальной редакции «Голос Армении», Национального радиовещания (1994-1995). Преподавала: музыкально-теоретические дисциплины в училище искусств г. Армавира (1995- 2005, с 1996- 2005 — зав. отделением).; руководила музыкально-теоретическим отделом в муз. школе г. Егвард (1997-1998); в Ереванской гос. консерватории на кафедре Армянской музыкальной фольклористики (с 2004 по сей день). Научный сотрудник Института искусств НАН РА (с 2010), ст. науч.сотрудник (2017). Кандидат искусствоведения, диссертация «Армянские традиционные свадебные хвалебные песни в контексте древнего обряда» (науч. рук., проф. А. Пахлеванян). Неоднократно выступала на различных межвузовских и международных (Париж, Москва, С.-Петербург) научных конференциях с научными докладами, автор более 30 научных статей. В С.-Петербургс-кой консерватории им. Н.Римского-Корсакого по приглашению кафедры Древнерусского певческого искусства читала лекции об армянской народной музыке. За активную организационную музыкальнотворческую работу среди школьников и студентов неоднократно удостаивалась наград и грамот.*

Information about the author: *TIGRANYAN MARIANNA ALBERT (born 23.6.1971, Yerevan). In 1995 Marianna Tigranyan graduated from the Department of Musicology at Yerevan Kom/'tas State Conservatory, with a research paper on "The Chanting Fragments from the Daredevils of Sassoun Epic" (scientific supervisor, prof. A. Pahievanyan). In 2005 she completed postgraduate studies at YSC on Armenian Traditional Wedding Ceremony Music (2005). She has been working at the Music editorial office of the "Goios Armenii" newspaper, and at Voice Music School N 17 (1986); at the Department of Music Theory at the R. Meiikyan Music College (1990), at the Department of Musicology at Yerevan Kom/'tas State Conservatory, and at the National Radio (1994-1995). M. Tigranyan has been teaching music theory at the Armavir State Art School (in 1995-2005, in 1996-2005 as the Head of the Department). In 1997-1998 she was the Head of the Department of Music Theory at Yeghvard Music School. Since 2004 she is working at the Department of Folklore Studies at the Yerevan State Conservatory. Since 2010 she is a Research Fellow at the Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia; since 2017, a Senior Research Fellow (2017). She completed Ph.D. thesis on "Armenian Traditional Wedding Songs of Praise within the Context of the Ancient Ceremony" (scientific supervisor prof. A. Pakhievanyan). M. Tigranyan repeatedly spoke at various interuniversity and international scientific conferences (Paris, Moscow, St. Petersburg). She is the author of more than thirty research articles. On the invitation of the Department of Ancient Russian Chants, she has been lecturing on Armenian folk music at the Rimsky-Korsakov State Conservatory in Saint Petersburg. M. Tigranyan was repeatedly granted awards and letters of appreciation for her organizational and creative activities for schoolchildren and students.*

Резюме

Музыковед, студентка 2-го курса бакалавриата Ереванской государственной консерватории им. Комитаса *Лилия Минасян.* - *“Манук Манукян: жизнь и творчество (19272010)”.*

Кандидат искусствоведения *Марианна Альбертовна Тигранян.* - *“Манук Манукян: жизнь и творчество (1927-2010)”.*

Настоящая статзя посвящена М. Манукяну — музыковеду, фольклористу, этнографу, заслуженному педагогу, кандидату искусствоведения, деятельность которого осталась вне поля зрения музыковедов. Желая восполнить этот пробел, автор осветил важные вехи жизни известного музыканта. С сожалением следует отметить, что личный архив М. Манукяна не сохранился, что создало некоторые трудности. Однако нам удалось связаться с родственниками музыковеда, друзьями и коллегами, которые предоставили необходимую информацию. За свою долгую и плодотворную деятельность М.Манукян изучал народно-профессиональное музыкальное искусство ашугов, посвятив этой теме монографии и более 30 научных статей. М.Манукян был научным сотрудником Института искусств НАН РА, преподавал в ВГК им. Комитаса и Педагогическом институте им. Х.Абовяна. Он занимался собиранием фольклора, организацией научных экспедиций в Армении, а так же за ее пределами, записав в общей сложности около 2000 армянских крестьянских, духовных и ашугских песен.

Summary

Musicologist, second-year student at the Yerevan State Conservatory after Komitas *Liliya Minasyan.* - *“Manuk Manukyan (1927-2010). The Life and Activity”.*

PhD canditate, Senior Researcher, Department of Music, Institute of Arts, RA NAS, YSC Docent *Marianna Albert Tigranyan.* - *“Manuk Manukyan (1927-2010). The Life and Activity”.*

The present article is dedicated to M. Manukyan, a musicologist, folklorist, folklore collector, well known pedagogue, candidate of arts, whose activity has remained out of the attention of musicologists. Wanting to fill that gap, we started this study about famous musician's life and activity. It should be noted with regret that M. Manukyan's personal archive has not been preserved, which created a certain obstacle. Fortunately, we were able to contact the musicologist's relatives, friends, colleagues, who provided us with the information we needed. During his long and fruitful activity M. Manukyan also touched upon a number of issues of Armenian national music. With special devotion M. Manukyan studied the Armenian musical ashugh music, dedicating monographs on that topic more than 30 scientific articles. M. Manukyan worked at the Institute of Arts of NAS RA, in the Yerevan Komitas State Conservatory and Kh. Abovyan Pedagogical Institute. He was engaged in folklore collecting, organizing scientific expeditions in Soviet Armenia and in different regions of Soviet Union where lived many armenians, and recorded a total of about 2 000 Armenian peasant, sacral and ashugh songs.